**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ N 3-Ա**

ք. Երևան 28.12.2023թ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ և ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին օրենքի» 24-րդ հոդվածի 2-րդ մասով, 25-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետով, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կանոնադրության 42-րդ կետի 2-րդ ենթակետով, 57-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 226-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի (թիվ 9) քվեարկության արդյունքները, 2023 թվականի դեկտեմբերի 22-ին «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդին Դ. Խիթարյանի ներկայացրած գրավոր պարզաբանումները (բացատրությունը)՝

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է՝**

1. Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտոր Դավիթ Խիթարյանի նկատմամբ «նկատողություն» կարգապահական տույժ կիրառելու մասին» N 1-Ա և ««Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի ռեկտոր Դավիթ Խիթարյանի նկատմամբ «խիստ նկատողություն» կարգապահական տույժ կիրառելու մասին» N 2-Ա որոշումները՝ աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները առանց հարգելի պատճառի պարբերաբար չկատարելու համար տնօրեն (ռեկտոր) Դավիթ Խիթարյանի լիազորությունները անվստահություն հայտնելու հիմքով ուղղում վաղաժամկետ դադարեցնել՝ 2024 թվականի հունվարի 3-ից լուծելով նրա հետ 2021 թվականի հունվարի 29-ին կնքված N 1-1 աշխատանքային պայմանագիրը:

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **ԿԱՐԵՆ ԳԻԼՈՅԱՆ**